


Chiffon
through
gathering



825
Կ-88

Ծ. 1.
Օ. Ա. Ա. 7. 229

13140-58

Ա. Յ. Խ. Ա.

Աղքանձու հերիտժ.

II

ԱՌԱՋԻՆ ԶԵՄԱՆԻԿՆԵՐԻ

Աղքանձու հերիտժ.

Գիրքը կ կազմ.

Թարգմ. Ա. Միքանեան

№ 10

ՊԵՏԵԱ

Տաղարան ՀՀ/ՄՀՀ գրադարան վաղ. 6.

1911.

-6 NOV 2011

ՄԱ. 858

Արմ.

2-47682

825

Ա-98

2-47682

I

ԱՐԻՍ.

Անգլիական հերթափ.

II

ԱՌԱՋԻՆ ԶՆԾԱՂԻԿՆԵՐԸ

Անգլիական հերթափ.



ԳՈՒԱԴՐԱԴՐԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1003

21126

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԻՐՄԱՆ» Գրաֆիկային փող. 6.

1911

25 FEB 2013

9/9

Արտատպած «Հասկեր»-ից



9-39532-63



Արտա

Անգլիական հեքիար

Աքւա. այսպէս էր իմ փոքրիկ կաթելու
անունը՝ Թէպէտ փոքրիկ ու աննշան էր նու,
բայց շատ հետաքրքրական բաներ էր տեսնել իր
կեանքում:

Աքւան ապրում էր ծովում, մեծ, կատոյտ
ծովում: Մի տաք ու պայծառ օր էր, երբ նրա դար-
մանալի ձամփորդութիւնն սկսւեց: Արեգակը
շքեղ լուսաւորում էր ծովը, նրա ոսկե շողելը

*) Արտա—լատիներէն նշանակում է ջուր:

յոլցլում էին ջրի կաթիների մէջ, կաթիներն
էլ ուրախ զւարթ խայտում էին ձկների արծաթա-
փայլ մէջքերին ու ծովի փրփրուն ալիքների
բաշերի վրայ: Երկար ժամանակ խաղում թռչկո-
տում էր փոքրիկ Աքւան, վերջապէս, յոգնեց...
Նայեց կապուտակ երկնքին, ուր լողում էին ճիւ-
նաթոյր ամպերը, նայեց ու սաստիկ փափադ
զգաց երկնքում զբօննելու, այն ճիւնաթոյր ամ-
պերի հետ գրկախառնւած: Ու նա աղաչեց արե-
ւին, որ օգնի իրեն այնտեղ ելնելու.

— Սիրուն արև, ի՞նչ կլինի պատւիրես ջերմ
շողերիդ, որ թե տան ինձ, թռչեմ ճերմակ ամ-
պերի մօտ ու նրանց հետ գրկախառնւած լող
տամ կապուտակ երկնքում...

Եւ արեւ իր ջերմ շողերն ուղարկեց, Աքւա-
յին տաքացրեց, թեթև գոլորշի դարձրեց, ու Աք-
ւան բարձրացաւ վեր, վեր: Նա հետզհետէ սառ-
չում էր, սառչում և վերջապէս միացաւ այն
ամպիկի հետ, որին նայում էր ներքեց, երբ դեռ
ինքը գտնուում էր ծովում:

Յանկարծ քամի ելաւ, ամպը քշեց ծովի
վրայով: Ի՞նչ հետաքրքրական էր յած նայելը:
Շոգենաւերը բոլորովին փոքր էին երեսում, իսկ
նաւակներն ասես մանրիկ տաշեղներ լինէին:
Քամին քշում էր ամպը հեռու, հեռու: Ծովի
արդէն մի կողմը մնաց, ու ամպը ծանրացաւ,
կախւեց երկրի վրայ:

Եւ տեսնում է Աքւան, որ սպիտակին են
տալիս անակները, կանաչին՝ այգիներն ու մար-
դաղետինները, իսկ գրանց միջով ժապաւէնաձև
ձգում անցնում են ճանապարհները:

Բայց ահա մօտենում է երեկոն, արեւ կամաց-
կամաց իջնում է դէպի ցած, փչում է երեկո-
յեան հովիկը: Վերջապէս արեգակը բոլորովին
թագնւեց լեռան ետեսում: մութն ընկաւ և Աք-
ւան այլևս չէր կարողանում զանազանել տները,
ծառերը:

Գիշերային խաւարի մէջ նա միայն տեսնում
էր փալփլող կրակներ. զրանք այն ճրագներն էին,

որ մարդիկ վառել էին իրենց բնակարաններում:

Տեսնում էր Աքւան այդ բոլորը, կարօտն էր բաշում և ուզում էր վերադառնալ իր հայրենի ծովը... Օդը հետպհետէ սառչում էր, և Աքւան պղում էր, որ ինքը ծանրանում է, ծանրանում. ահա պոկ եկաւ ամպից և միւս կաթիլների հետ թառ ու վայր ընկաւ...

Գիտէք՝ ուր, Ծնվը, ցամաքի՞ վրայ:

Ո՞չ ծովը, ոչ էլ կոշտ հողի վրայ, այլ ինչ որ կակուղ, թաւշանման, անուշաբոյր անկողնի մէջ։ Պառկեց Աքւան ու քուն եղաւ. չէ որ նա սաստիկ յոդնած էր ճամփորդութիւնից։ Ամբողջ զիշեր քնած էր Աքւան։ Հետևեալ առաւօտը, հէնց որ արեն ելաւ ու իր շողերը գցեց Աքւայի վրայ, Աքւան զարթնեց, բացեց աչքերը և հայեց տեսնի, թէ որտեղ է քնել զիշերը, և այդ ի՞նչ բուրաւէտ կարմիր անկողին է, ուր ի՞նքը նեցնէ մուշ-մուշ։

Ի՞նչ էր կարծում, որտեղ էր քնել Աքւան,

Մի մեծ կարմիք վարդի անուշահոտ ծոցում։ Գիշերւայ քաղցը քունը բաւական կազզուրել էր Աքւային։ Նա հիմա նորից ուզում էր շարունակել իր ճամփորդութիւնը. և ահա արևի ըունակել իր ճամփորդութիւնը. և ահա արևի շողերը կրկին օդնութեան հասան նրան։ Եւ Աքւան շողի թկին թուչում էր օդի մէջ մինչև կէսօր։ Նա սաստիկ, սաստիկ շոգում էր, բայց չէր կարողանում ճարել ոչ դալար խոտ, ոչ ծաղիկ, որ նրանց ստւերում պաշտպանւէր օրւայ տաղից։ Եւ նա աղաչեց արևին։

— Նախշուն արև, թող էլի ետ գնամ ծովս և աղատ լողամ այն հով ու զով ջրերում...

Դեռ խօսքը բերանումն էր, որ Փչեց ցուրտ քամին։ Սև ամպերով ծածկւեց ամբողջ երկինքը։ Աքւան էլ միացաւ այդ ամպերին ու ծանրացաւ։ Ծանրացան նաև շատ ուրիշ կաթիլներ ու նրանք բոլորը թաւալ-թաւալ, իրարու առաջելով, շըփ-շըփալէն զարնւեցին գետնին... Թարմ, յորդ անձ-

ըեւ կենսարար բերկրանքով լցրեց պատակած արտերն ու արօաները:

Աքւան այս անգամ ընկաւ մի բարձր լեռան լանջին, նրա հետ ընկան շատ ուրիշ կաթիլներ, Աքւայի ընկերները: Նրանք բոլորը արագութեամբ սահեցին դէպի ցած, իրար բոնելով ու քաշը երսի:

Ճանապարհին, հանդիպեցին մի գլուխն առւակի, միացան նրան և աղմուկ շաշիւնով առաջ վագեցին քարերի վրայով, թոշելով դէպի ցած, դէպի ստորոտը: Նրանց պատահում էին նոր առւակներ, որոնք հոսում էին նոյն լեռան լանջով: Եւ այսպիսով հետզհետէ լայնանում, խորանում էր այն վտակը, որի մէջ գտնւում էր Աքւան:

Լեռան ստորոտին մօտենալով՝ Աքւան լսեց ջրի ազմկալի շաշիւն ու թշոց, նայեց, տեսաւ, մի ահագին անիւ պտառում է...

Զրաղաց էր:

Հզօր հսկաներն էին շարժում այդ վիթ խարի անիւը:

Ոչ, հսկաները չեին նրան շարժողը, այլ փոքրիկ կաթիլներն էին, որ իրար օգնելով ու միահամուռ աշխատելով թափով դարձնում էին ահագին անիւը և վազում առաջ, առաջ...

Ահա նրանք ընկան մի լճակ, մի լիաղաղ լճակ, որի երեսին լողում էին բաղիկներ, ինկ յատակում ապրում էին գորտեր, կըռկըռան գործարը: Լաւ էր լճակը կաթիլների համար: Նրանք եղբեմն թռչում, նստում էին լողացնող բաղերի մէջքին, և այդ ժամանակ նրանց թւռնում էր թէ զբօնում են նաւակով: Երբեմն էլ կպչում էին ոստոստող գորտերի մէջքին և ուրախանում էին անսահման, կարծելով թէ ձի են հեծած:

Բայց Աքւան շատ չմնաց լճակում, ընկած լճակից զուրս եկող գետակի գիրկը, և գետակը դուրս բերեց նրան իր ջրերի հետ: Գետակը հոգուրս բերեց նրան իր ջրերի հետ: Գետակը հո-

սում էր հարթ տեղերով, մեզմ ու հանդարտ և
հետզհետէ լայնանում, խորանում էր իր մէջ
թափւող առւակներից ու վտակներից: Նրա ափե-
րին երեսում էին գիւղեր, գործարաններ ու քա-
ղաքներ, նրա վրայ լողում էին մեծ շողենաւեր
զանազան ապրանքներով բեռնաւորւած:

Աքւան ու իր ընկերակիցները սաստիկ հետա-
քրքրւում էին այդ բոլորը տեսնելով, ուզում էին
մի լաւ զննել այդ ամենը, սակայն չէին կարո-
ղանում կանգ առնել, վազում էին առաջ, առաջ...

Եւ յանկարծ մի գեղեցիկ, մի պայծառ օր
Աքւան նկատեց, որ իրեն առաջ սփւած է մի մեծ
կանաչաւուն փայլուն տարածութիւն: Աքւան
ճանաչեց իր հայրենի ծովը, ցնծաղին ընկաւ նրա
զով ալիքների մէջ ու գրակախանւեց նրանց հետ,
այն հոգ ու աղի ալիքների հետ:

Սիրելի մանուկներ, զբօննէլ էք դուք ար-
դեօք երբ և իցէ ծովի ափին: Լսէլ էք ալիքների

շիշփոցն ու թշոցը... Այդ Աքւան է, որ ընկերնե-
րին պատմում է իր անվերջ ճամփորդութիւնների
մասին...



«Այս ինչ բան է: Ո՞վ է համարձակում ինձ
խանգարել: Ես ամենքին հրամայել եմ, որ լռեն
ու անշարժ մնան... Այս ձայները նման են ջրի
կարկաչին, բայց չէ որ ես հրամայել եմ ջրին էլ,
որ այլևս չխոխոցի: Իսկ սա ինչ բան է: Ասես
թռչունների երգը լինի... Բայց չէ որ ես թռչուն-
ներին ուղարկել եմ հեռաւոր հարաւ», — ասում
էր ծերունին աւելի և աւելի խոժոռելով թաւ-
յօնքերը:

Այդ ժամանակ ծերունին տեսաւ, որ իր
առաջ կանգնած է ոսկեփայլ գանգուրներով ու
կարմրաթուշ դէմքով մի պատանի:

— Քեզ ով թոյլ տւաւ այստեղ գաս, — բար-
կացած փնթփնթաց ծերունին:

— Ի՞նչ դժգոհ ես երևում, պապի, — ասաւ
պատանին... — Ներիր, որ եկել եմ առանց քո թոյլ-
տւութեան: Բայց մի նայիր, տես՝ ինչպէս ամենքն
ուրախ են գալուս. կարծում էի, թէ դու
էլ...

Ո՞չ, ոչ, ես ուրախ չեմ, — մոայլ մըրթմըր-
թաց ծերունին:

Առաջին ձևադիկները

Անգլիական հետիար

Երկար ու սպիտակ միրուքով մի ծերունի
նստել էր ալեխան յօնքերը կիտած ու մտածում
էր: Մութ ու ցուրտ էր նրա շուրջը:

«Աշխարհի երեսին ոչ ոք այնքան բան չի
արել, որքան ես», մտածում էր ծերունին և հա-
րիւրերորդ անգամ սկսում էր համարել իր գոր-
ծերը:

Լիակատար խաղաղութիւն էր տիրում շուրջը,
բայց յանկարծ ինչ որ աղմուկ ընդհատեց ծե-
րունու մտածմունքը:

—Ես շատ եմ լսել մեծամեծ գործերիդ մասին,—շարունակեց զւարթաղէմ պատահին,—և եկել եմ հաստատ տեղեկանալու, ճիշտ է արդեօք այն ամենը, ինչ որ պատմում են քո մասին:

—Ես արել եմ աւելին, քան թէ դու կարծում ես, տղայ. ոչ ոք չի կարող թւել իմ կատարած բոլոր հրաշքները...

—Ասա ինձ, ծերուկ, ի՞նչ է արածդ. Ես կարծում էի, թէ բացի ինձանից ոչ ոք հրաշք չի գործում:

—Ես կփչեմ գետին, ու նա կծածկվ սառուցով, —սկսեց ծերունին:

—Իսկ ես կփչեմ սառուցին ու կաղատեմ կաշկանդւած գետը, —պատասխանից պատանին:

—Ես կթափահարեմ ալեզարդ գլուխս, ու երկիրը կծածկվի ձիւնով:

—Ես թափ կտամ ոսկեներ գանգուրներս, և պայծառ կժպտայ արեզակը ու կհալւի ձիւնը:

—Ես կհրամայեմ թռչուններին, որ լուն ու նեռանան, և թևերը բանալով՝ կդիմեն դէպի հեռաւոր երկիրներ:

—Իսկ ես կասեմ՝ «թռչնիկներ, վերադարձէք». կդան նրանք, կպտտւեն դլիխս ու օդը կլցնեն զիլ երգերով:

—Ոչ ոք չի կարող մէկ մէկ համարել այն բոլոր տերեները, որ սարսափից դողդողալով թափւում են գետին, երբ ես կպչում եմ նրանց սառցէ մատներովս, կամ վչում եմ իմ ցուրտ շունչը:

—Ես երբէք չեմ տեսել տերեները ծառերից թափւելիս, այլ տեսել եմ նրանց միշտ մատղաշ, կանաչ, իմ երկալուս ուրախ գողգողալիս, —առարկեց պատանին:

Եւ ծերն ու պատանին խօսում էին ամբողջ գիշեր: Ծերունին սկսեց յոգնել, իսկ պատանին հետղիետէ աւելի զւարթանալ:

Լուսաբացին արել փայլեց ու օդը լցւեց թռչունների ուրախ ծլւցով:

Պատանին հասկացաւ, որ արդէն բոլորն իմացել էին իր գալստի մասին ու իրան զիմաւորում էին ուրախ զւարթ. նա նայեց իր շուրջը երջանիկ ժպիտով, ապա դարձաւ ծերունու կողմը, որ մնաս բարև ասի նրան...

Բայց ծերունին էլ չկար...

Այնտեղ, ուր նա նստած էր մի քիչ առաջ,
երկում էին մի քանի սպիտակ բծեր՝ ձիւնի վեր-
ջին մնացորդները:

Պատանին մօտեցաւ նրանց, —ու ժպտաց:
Բծերը ոչ թէ ձիւնի մնացորդներ էին, այլ սպի-
տակ ձնծաղիկներ, գարնան առաջին ծաղիկներ,
որոնք գեռ յիշում էին ձմռան մասին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0388990

ApM.

2-4768

“*h U q P u y u P u t L*”

Հրատ. «ԶՈՒՄ ՔՈՅՑԲԵՐԻ»

Linguistic subunits.

- | | |
|---|--------|
| № 1 «Ճերտէլու ու ից Բալլի ծառան» | 1 կոպ. |
| № 2 «Ասաէր Հսկայ» | 1 կոպ. |
| № 3 «Գող մաքին» (պատկերապարզ) | 1 կոպ. |
| № 4 «Կարմիրավղիկ» | 1 կոպ. |
| № 5 «Ռդորմած թշնամու աղբիւր».—Սոխուկի
երպը | 1 կոպ. |
| № 6 «Երկու առակ» | 1 կոպ. |
| № 7 «Զարմանալի որդ» (պատկերագորդ) | 2 կոպ. |
| № 8 «Վայրի կարագներ» | 1 կոպ. |
| № 9 «Բարեսիրտ Գողիաթլը» | 1 կոպ. |
| № 10 «Արւա».—«Առաջին Զնձաղիկները» | 1 կոպ. |

Григорий Тифлисъ. Книжный магазинъ „ТИРЪ“
Седраку Аветянъ.

414